ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունվարի 2015թ. N 17

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.21-րդ և 1.24-րդ կետերով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Արմավիրի և Էջմիածնի տարածքային զինվորական կոմիսարիատներում 1999 թվականին ծնված նախազորակոչային տարիքի պատանիների կցագրման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծել տարածքային բժշկական հանձնաժողովներ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Արմավիրի և Էջմիածնի տարածքային զինվորական կոմիսարիատներին /Ա.Համբարձումյան, Հ. Ազատյան/ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել 1999 թվականին ծնված նախազորակոչիկների կցագրման աշխատանքները:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների, կազմակերպությունների ղեկավարներին /անկախ կազմակերպական-իրավական ձևից/ առաջարկել՝ տարածքային զինկոմիսարիատների կողմից ներկայացված պահանջներին համապատասխան նորակոչիկներին ծանուցել և աջակցել զինվորական կոմիսարիատ նրանց ներկայանալուն:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը՝ /Ա.Այվազյան/ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ կցագրման նպատակով տարածքային զինվորական կոմիսարիատներ չներկայացող նորակոչիկների որոնման ու պարտադիր զինվորական կոմիսարիատներ ներկայանալու ուղղությամբ:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը /Ծ. Գրիգորյան/՝ կցագրման հանձնաժողովները համալրել համապատասխան բժիշկ մասնագետներով:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը

/Ա.Ղուկասյան/՝ ապահովել զինվորական կոմիսարիատներից ստացված տեղեկատվությունը կցագրման աշխատանքների վերաբերյալ և աջակցություն ցուցաբերել նրանց:

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը /Կ. Դանիելյան/՝ ավտոտրանսպորտային միջոցներով ապահովել նորակոչիկների փոխադրումը համայնքներից տարածքային զինվորական կոմիսարիատներ՝ ըստ զինվորական կոմիսարիատների հայտերի:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը /Գ. Սայադյան/՝ դպրոցներում բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների մակարդակը և կցագրման գործընթացին աջակցելու նպատակով կազմակերպված կարգով 1999 թվականին ծնված նախազորակոչային տարիքի պատանիներին ներկայացնել համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ:
9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /Հ. Վարդանյան/՝ ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը՝ տեղական հեռուստատեսությամբ և մամուլով:
10. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային զորակոչային հանձնաժողովին, Արմավիրի և Էջմիածնի տարածքային զինկոմիսարիատներին:
11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ <<26>>-Ի
N 17 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

1 .Ա.Համբարձումյան - հանձնաժողովի նախագահ, Արմավիրի տարածքային զինվորական կոմիսար
2. Ա.Շիրինյան - ավագ բժիշկ, թերապևտ
3. Բ. Փոդրատչյան - վիրաբույժ
4. Ս.Ասատրյան - հոգեբույժ
5. Ա.Սարգսյան - մաշկաբան
6. Հ. Դավթյան - նյարդաբան
7. Հ. Մարկոսյան - քիթ-կոկորդ-ականջ
8 . Ա.Գևորգյան - ակնաբույժ
9. Մ. Ամիրջանյան - սրտաբան
10. Ա. Խաչատրյան - բուժքույր

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ <<26>>-Ի
N 17 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

1 .Հ. Ազատյան	-հանձնաժողովի նախագահ, էջմիածնի տարածքային զինվորական կոմիսար
2. Ա. Մուրադյան	- ավագ բժիշկ, ընտանեկան բժիշկ
3 .Մ. Մկրտչյան	- քիթ- կոկորդ- ականջ
4. Ա. Բլդրյան	- վիրաբույժ
5. Լ.Կուծանյան	- նյարդաբան
6. Լ. Պողոսյան	- հոգեբույժ
7. Վ. Գրիգորյան	- ակնաբույժ
8 . Լ. Եղիազարյան	- մաշկաբան
9. Ա. Լևոնյան	- սրտաբան
10. Վ. Բարցեղյան	-բուժքույր

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ